ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավելացված արժեքի հարկի մասին» 1998 թվականի դեկտեմբերի 18-ի ՀՕ-43 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 30-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«30) բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքեր և (կամ) անհատական բնակելի տներ կառուցապատող և (կամ) սեփականատեր և (կամ) կառուցապատողի և (կամ) սեփականատիրոջ հետ կնքված շինարարական կապալի պայմանագրով կապալառու հանդիսացող անձի կողմից մինչև 2026 թվականի հունվարի 1-ը Արցախի Հանրապետության տարածքում բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքերի և անհատական բնակելի տների կառուցումը և (կամ) օտարումը.»:

Հոդված 2.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2021 թվականի հուլիսի 1-ից:

2. Բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքեր և (կամ) անհատական բնակելի տներ կառուցապատող և (կամ) սեփականատեր և (կամ) կառուցապատողի և (կամ) սեփականատիրոջ հետ կնքված շինարարական կապալի պայմանագրով կապալառու հանդիսացող անձի կողմից մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կառուցված (այդ թվում՝ անավարտ (կիսակառույց)) բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) կամ ստորաբաժանված շենքերի և (կամ) անհատական բնակելի տների՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո կառուցումը և (կամ) օտարումն ազատվում է ավելացված արժեքի հարկից, իսկ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելու պահը սույն օրենքով ազատվող գործարքներին վերաբերող՝

հարկային հաշիվներում առանձնացված և հաշվանցված ավելացված արժեքի հարկի գումարները ենթակա են Օրենքով սահմանված կարգով վերաձևակերպման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո առաջին հաշվետու ժամանակաշրջանում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**